

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ՍԻՈՆԻ ներկայ բիւնն սկսեալ Դիւան Սուրբ Յակոբայ անուան ճակ հրահարակութեան կուսանք Ս. Արոսիս մեջ պահուած հին վաւերագրեր՝ կոնդակներ, նամակներ եւ զանազան թղթակցութիւններ՝ փոխանակուած կարողիկոսներու, պատրիարքներու եւ ծանօթ ու անծանօթ եկեղեցականներու եւ աշխարհականներու միջեւ:

Տարակոյս չկայ թէ Պատմութեան համար ստոյգ եւ վաւերական աղբիւրներ են այս կարգի գրութիւնները, որոնք մեծապէս կը նպաստեն լոյս սփռելու այլեւայլ ժամանակներու մեջ ազգային-եկեղեցական կեանքին մութ մնացած կողմերուն վրայ, երեսն բերելու ցարդ անծանօթ դէպքեր ու դէպքեր եւ ծանօթացնելու այդ շրջաններուն հիւրող հայեացքները, բարբերն ու սովորութիւնները:

Հրահարակութեան ճալով Սուրբ Արոսոյս Դիւանի այս շահեկան վաւերագրերը, կը յուսանք նպաստ մը բնօրինակ Ազգային-եկեղեցական Պատմութեամբ զբաղող մեր բանասէր-պատմագիրներուն եւ հետաքրքրական էջեր նուիրել ՍԻՈՆԻ յարգող ընթերցողներուն:

Բնագիրները կը ներկայացնեն ամենայն հարազատութեամբ, անփոփոխ պահելով բերականական սխալները: Շտկած ենք միայն ուղղագրական սխալները եւ կարգաւորած ենք կէսաղբութիւնները, բանալով նաեւ փակագրութիւններն ու համառօտագրութիւնները:

Մ. Ն. Ն.

Ա

(Մատենադարանի վրդ. Կաթագի երեսնադէմն.
առ Նովադար վրդ. Այնթապցի)

Յանէկը էլիցս էացուցէն մաքրագործեալ եւ յօրինեալ, բարաստան բարերոյն տնկեալ էական աջոյն եւ առողեալ քառափտակ գետոյն ըղիմանէ, ըստ մեծի Տեսանողին, տնկեալ ի տան Աստուծոյ եւ ծագեալ ի դաւիթս Տեսան յոքնաբերդուն առաքինութեամբ, այսինքն տեսականաւ եւ գործնականաւ, եւ դասակարգեալ ի պարս յաստուածահայիցն եւ տեսանողացն սրբոց՝ երջանկապատիւ եւ լիազօղի սրբազան բարունուոյ մեծի՝ Տէր Նովադար աստուածաբան եռամեծից մատուցանեմք զոգջոյն տեսանաւանդ հանդերձ երկրպագական համբուրիս յաստուածահայիցն երկնաշուաց քոյ՝ յետնեալքս ի սպասու կացիւց եւ բրնակչաց յաստուածակոխ քաղաքի Տեսողն եւ ընդ ոտիւք սրբոյ հօր մերոյ ի Տէր Աստուածատուր մեծի զիտապետի, Մարտիրոս տրուպ սպասաւորս բանի եւ ընդ մեզ եղեալ միաբան եղբարց՝ Տէր Դուկասէ եւ մահտեսի թարճիման Նաղուպէ եւ Խորրէ, մահտեսի Դրիգորէ եւ մահտեսի Սարգսէ ընկալցիս վերոյգրեալ զոգջոյն յոքնատարի ըզմամբ: Եւ ընդ սմին յաւէտ տարիմամբ հարցանեմք զոգջունէ սիրելւոյդ՝ թէ զիմօրդ եւ հիկէն(?) բարեկրութեամբ կենցաղավարի ազատականութիւն

ձեր, զոր Տէր Յիսուս անշիջանելի պահեցէ զպայծառ ջահգ Հայաստանեաց եկեղեցոյ: Իսկ եթէ վեհանձնութիւն ձեր առ մերս ստորաբերցի խուզման ազագու՝ գոհութիւն Դրիստոսի, կամք ըստ արժանեաց Տեսան հաճոյ եւ զապագայն Տեսան եմք յանձին: Եւ ընդ սմին զիտութիւն լիցի մեծութեան ձերոյ, զի մեք ահա յետին թշուառութեանն ստորանկեալ կամք, որպէս որ քաջայայտ է մեծի իմաստութեան ձերոյ, զի ձեռն Տեսան մխեցաւ ի մեզ վասն բազում յանցանաց մերոց, ըստ հնոյն Իսրայելի տաճար Տեսան առ մեզ ասելով. սակս որոյ նախ զտաճարաց մերոց բուռն հարեալ կամի որոշել զմեզ, եթէ ոչ զարձցուք ի զղջումս: Բայց ծանիր, ո՛վ սիրելի, ահա այսքան օր է որ եկեալ եմք ի տեղս, հանապազ կու բողբեմք՝ թէ մեզ ճար մի արարէք. մինչեւ ցայսօր յուստեք ճարակ մի չեղեւ մեզ. եւ առ սրբութիւնդ հրաւէր ուղարկեցին՝ թէ եկեալ առ մեզ յայսպիսի նեղութեան աւուրս՝ յօգնութիւն մի հասուցանես, բայց ոչ զիտեմք՝ թէ սրբութիւնդ ընդէ՞ր ոչ կամեցար զալ ի տեղս: Եթէ ի մեզանէ մեղադիր լինիս՝ թէ դուք ընդէ՞ր հետ նոցա գրին ոչ մարդ եւ ոչ զիր ուղարկեցիք, տե՛ս, ո՛վ սիրելի, մեք այս քառասուն օր մերձեցաւ որ եկիր եմք, նոքա զմեզ ամեննին մարդոյ կարգ չեն եղեալ, ոչ զնոցա զնացած մարդն եմք

տեսեր և ոչ զգիրն: Եթէ այս տնհաւանելի
թուեցի քեզ, ի գալստեան քում լուրցես
յայլմէ զստուգութիւն իրին: Ապա եթէ
վարդապետի կողմանէ ասիցես՝ թէ ի Ղօն-
հայու ընդէ՞ր մեզ կրկին զիր չհտուր, նո-
րա պատճառն այն էր, որ մեք ի ճանա-
պարհին լուաք զքէն՝ թէ վարդապետն էջ-
միածին գնաց ուրախութեամբ. ընդ այն
ևս տրամեցաւ՝ թէ ընդ որ որ գիմեմք,
բան յառաջ չի գնար. և թէ այլ կողմանէ
բանիւ մի՞ մեղադրեսցես. յայտնապէս ա-
սեմք քեզ, սիրելի՛, անմեղադիր լի՛ր, մի-
թէ դու զվարդապետի բնութիւնն չես գի-
տեր: Եթէ դու որ համասուն և համչիրակ
և զշարժմանց նորին տեղեակ զօրով մե-
ղադրեսցես, ապա զանծանօթ մարդիկն ո-
րով բանիւ հաւանեցուցուք: Եթէ այս-
պիսի զծաւարութեան ժամանակիս որ մեք
ըստ մերոյ կարողութեանն ջան ու զայրաթ
որ չառնեմք, այլ ո՛ւր կու երևի մեր քը-
րիստոնէութիւնն, թո՛ղ թէ զկարգ աստի-
ճանաց: Եթէ այն տեղացն որ զրկեցիմք՝
այլ ո՛ր բերանով զԲրիտանի տնօրէնու-
թիւնն քարոզեմք: Եթէ զլուսաւորչաչէն
տաճարքն որ կորուսանեմք, այլ ե՛րբ կա-
րեմք ասել՝ թէ Լուսաւորչի ազգ էմք: Յե-
րեսս անկեալ աղաչեմ, ո՛վ սիրելի, ի հա-
սանել գծոյս վազմադակի ելեալ գայցես առ
մեզ: Մեք ամենեքեանքս պարտ էաք յերես
ի քաջ գալ առ սրբութիւնդ, բայց ի մէջ
եկեալ եղբարքն առ մեզ փոխան համարի-
չիր: Աղաչեմք զքեզ, սիրելի՛, որ զխնդի-
րըս մեր անտես չառնես. չուտով ելեալ
գայցես, որ միաբանեալ ի միասին հոգեով
և մարմնով և կապակցեալ սիրով՝ մտանեմք
ի հանդէս մարտին, եթէ Տէր կամեցի-
նախ՝ վասն հաւատոյս հաստատութեան
քրիստոնէից, երկրորդ՝ վասն Սուրբ Տե-
ղաց զրկումն ածցուք ի միտ, երրորդ՝ վասն
նախատինս լինելոյ ի մէջ այլադաւան ազ-
գաց, չորրորդ՝ վասն վարդապետի ձերու-
թեանն խնայելով, զի մի՛ սգով հանդերձ
իջցէ ի չիրմի: Վասն այսքան պատճառաց,
սիրելի՛, փութաջիր գալ առ մեզ, զոր
Տէր Յիսուս արիացուցէ զքեզ ի յօգի: Ող-
ջունեալդ ի Սուրբ Հոգւոյն ողջ լի՛ր ի Տէր:
Բաւեցի ըստ անբաւ իմաստութեան քո:
Դրեցաւ Տնօրինի օրն կիրակէի [1656
Յունուար 13]:

Բ

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ(*) ձեռագիրն Է.

Պատճառ ձեռագրիս այս է: Ես Աս-
տուածատուր վարդապետս առաջնորդ Ս.
յնրուսադէմոյ եզի փոխան յանձին իմոյ
գտնիկի եղբայրն իմ զՏէր Եղիազար վար-
դապետն և մեր որդի Մարտիրոս վարդա-
պետն, զի երկոքեան սոքա միաբանեալ
զամենայն զործաւութիւնս մեր կատարես-
ցին մերով կամակցութեամբ, զի սոցա ա-
բարեալն ինձ հաճելի և հաւանելի է: Այլ
և սակա ի Սուրբ Ծննդեան դրանն և ի լու-
սոյն ի միասին մտանելոյ ընդ Յունաց ազ-
գին, և թէ այլ սոյնպիսեաց թէ հարկ լիցի,
ամ յամէ հանապազօրդ հարկս տալոյ ի
դրունս արքունի՝ ևսու հրաման մինչ զի
տարեանն հազար ղուրուչ և կամ սուղ ինչ
աւելի կամ պակաս՝ ըստ պատշաճի աջող-
մանն: Եւ ի վերայ յայսմ իրի ով ոք չու-
նի հրաման հակառակելոյ՝ թէ՛ ի մերայնոց,
թէ՛ ի յօտարաց, զի այսու պատճառաւ
բարձրացի եղջիւր ազգիս մերոյ համար-
ձակ ունելով զսուրբ տնօրինական տեղիսն
Քրիստոսի: Եթէ ոք տգիտարար ընդդի-
մացի զործոյս այսմիկ, զոչ տոնելն յօ-
գուտ համարեալ, այնպիսին հակառակ է
մեզ և առիթ խանգարման վիճակին Հա-
յոց. և յօժարութեամբ կամակցողքն օրհ-
նեալ լիցին յԱստուծոյ և ամենայն սրբոց
նորա, նաև ի մէջջ. ամէն: Դրեցաւ ձեռա-
գիրս ի թվին ՌՃԵ (= 1656) ամին և Մար-
տի ամսոյն 4. օրն Երեքշաբթի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՔ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Լ

Ի՞նչ է նշանակում «մխիթարել». ո՞րն
է այս բայի բուն իմաստը:

Ս. Դրքի վրացերէն թարգմանութեան
մէջ, որ կատարուած է հայերէնից, Յիսու-
սի տուած երկրորդ երանութիւնը (Մատթ.
Ե. 4), որ ասում է. «Երանի սգաւորաց,
զի նոքա մխիթարեսցին»՝ վրացին «մխի-
թարեսցին» բայը թարգմանած է չրջումով
և գրած է. «նուգէշինիս-ցէմու իշիլէն»:

(*) Աստուածատուր Տարօնեցի Պատրիարք
Երուսաղէմի. Ծան. Հրատ.